

Ծրագրի համարը՝ 40296  
Վարկի համարը՝ 2363-ARM  
Հոկտեմբեր 2010

**Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր**

**2010 թվականի երրորդ եռամսյակի  
հաշվետվություն  
Հոկտեմբեր 2010թ**

**ԱԶԲ-ի Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագիր  
2010թ-ի երրորդ եռամսյակի հաշվետվություն**

**I. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ**

1. Համաձայն ԾԿԽ-ի 2009թ.-ի հունիսի 22-ի թիվ No.6 արձանագրության I.2 կետի որոշման՝ Ծրագրի իրականացման ընթացքի եռամսյակային հաշվետվությունները (զեկույցները) պետք է ներկայացվեն մինչև եռամսյակին հաջորդող ամսվա ամսի 20-ը:

2. **2010թ.-ի երեք եռամսյակների համար** ՀՀ բյուջեով Ծրագրի շրջանակներում նախատեսված էր իրականացնել մոտ **14.968 մլն. ԱՄՆ** դոլար գումարի չափով աշխատանքներ, սակայն փաստացի կատարված աշխատանքների գումարը բոլոր բաղադրիչներով կազմեց **10.958 մլն. ԱՄՆ դոլար**, իսկ կատարված փաստացի վճարումների գումարը բոլոր բաղադրիչներով կազմեց **10.756 մլն. ԱՄՆ դոլար**: Այս մոտ 27%-ով կանխատեսումների թերակատարումը (2010թ.-ի կիսամյակի դրությամբ կանխատեսումների թերակատարումը 50%-էր) հիմնականում բացատրվում է 2010թ.-ի առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում բավականին երկարատև անձրևային եղանակով, որի պատճառով շինարարական աշխատանքները գրեթե դադարեցված էին գարնան ամիսներին, ինչպես նաև շինարարության ընթացքում առաջացած բազմաթիվ նախագծային փոփոխությունների պատճառով: Կանխատեսվում է, որ տարեկան կտրվածքով՝ ՀՀ բյուջեով Ծրագրի 2010թ.-ի համար նախատեսված ամբողջ գումարի պլանը կիրականացվի պատշաճ կերպով:

Ծրագրի առաջընթացի գործակիցը (ՇԱԳ)՝ **2010թ.-ի երեք եռամսյակների համար** փաստացի կատարված աշխատանքների մասով կազմում է 73%, ինչն կկունպենսացվի տարեկան կտրվածքով: Շինարարական աշխատանքները սկսած 2010թ.-ի ապրիլ ամսից արդեն իսկ իրականացվում են արագացված տեմպերով և մասհանումները ու վճարումները իրականացվում են պատշաճ կերպով:

ՀՀ պետական բյուջեով **2010թ.-ի երեք եռամսյակների համար** նախատեսված գումարները, փաստացի վճարումները և փաստացի կատարված աշխատանքները բերված են **աղյուսակ I-1-ում**:

**Աղյուսակ I-1: 2010թ.-ի երեք եռամսյակների ընթացքում կատարված աշխատանքներ**

Կատ No.	Վարկային կատեգորիա	բյուջեով նախատեսված գումարները (\$)	փաստացի կատարված աշխատանքներ (\$)	փաստացի վճարումներ (\$)
1	Աշխատանքներ	7 416 659	3 346 659	2 669 226
2	Սարքավորումներ և նյութեր	6 638 497	7 146 974	7 354 458
3	Ուսուցում և սեմինարներ	59 005	0	0
4	Խորհրդատվական ծառայություններ	<b>476 138</b>	<b>274 863</b>	<b>542 937</b>
4A	Կառավարում, նախագծում և վերահսկում	351 444	147 924	415 025
4B	Ծրագրի կառավարում	124 694	126 939	127 912
5	Տոկոսադրույք	296 544	136 592	136 592
6	Չբաշխված	22 591	0	0
7	Գործառնական ծախսեր	59 526	53 096	53 598
<b>Ընդամենը</b>		<b>14 968 960</b>	<b>10 958 184 *</b>	<b>10 756 811</b>

\* - 2010թ. ինը ամիսների ընթացքում կատարված աշխատանքների 10 958 184 ԱՄՆ դոլար գումարը տարբերվում է 2010թ.-ի սեպտեմբերին ինը ամիսների կատարված աշխատանքների համար ներկայացված գումարից 333 039.65 ԱՄՆ դոլարով: Այդ տարբերությունը՝ մեկ կատարողական ակտի գումար է, որն ներկայացվել է հաշվետվությունը հանձնելուց հետո, ինչի համար կներկայացվի սեպտեմբեր ամսվա ճշգրտված հաշվետվություն հաջորդ՝ հոկտեմբեր ամսվա հաշվետվության հետ միասին:

3. **Աղյուսակ I-1-ում** ներկայացված է ՀՀ պետական բյուջեով **2010թ.-ի երեք եռամսյակների համար** նախատեսված գումարների և փաստացի կատարված աշխատանքների միջև առկա տարբերությունների բացատրությունը ներկայացված է վերը նշված 2-րդ կետում:

Ինչպես արդեն հայտնի է նախկին եռամսյակի դրությամբ, **Կատեգորիա 1՝** փաստացի կատարված աշխատանքները՝ **3 346 659 ԱՄՆ դոլար** և **Կատեգորիա 2՝** սարքավորումներ և նյութեր փաստացի ծախսված

գումարները՝ 7 146 974 ԱՄՆ դոլար իրենցից ներկայացնում են կապիտալ շինարարության մասով փաստացի կատարված աշխատանքներ և նախատեսվածի նկատմամբ համեմատության համար պետք է դիտարկվեն միասին՝, որպես 10 493 633 ԱՄՆ դոլար գումար: Հետևաբար այդ երկու կատեգորիաներով փաստացի կատարված աշխատանքների գումարը 3 561 523 ԱՄՆ դոլարով պակաս է, քան նախատեսված գումարը (ՕԱԳ1,2=75%): Շինարարական աշխատանքները սկսած 2010թ.-ի ապրիլ ամսից արդեն իսկ իրականացվում են արագացված տեմպերով և տարբերությունը կկուպենսացվի ընդհանուր առմամբ 2010թ.-ի տարեկան կտրվածքով:

**Կատեգորիա 3՝** Ուսուցում և սեմինարներ, աշխատանքներ դեռ չեն իրականացվել, համապատասխանաբար գումարները չեն ծախսվել, սակայն այս կատեգորիայի գումարների ծախսման մոտեցումները համաձայնեցվել են ԱԶԲ-ի հետ վարկի վերահսկման առաքելության ժամանակ ա.թ. մայիսի 3-ից 8-ը: Համաձայն 2010թ.-ի մարտի 3-ին կատարված վարկային միջոցների վերաբաշխմանը այմանավորվածություն ձեռք բերվեց, որ «Ուսուցում և սեմինարներ» կատեգորիայի մոտ 50 հազար ԱՄՆ դոլար գումարը նախատեսված է ԾԿԳ և ԾՀՄ գրասենյակների մասնագիտացված անձնակազմի վերապատրաստման և սեմինարներին մասնակցելու համար: 2010թ.-ի չորրորդ եռամսյակում նախատեսվում է «Ուսուցում և սեմինարներ» No.3 Կատեգորիայի գումարի մի մասը (մոտ 5 000 ԱՄՆ դոլար) օգտագործել ԾԿԳ-ի ֆինանսիստ-վճարումների մասնագետ Լատրա Տեր-Հարությունյանի՝ Թուրինի Միջազգային Վերապատրաստման Կենտրոնում կայանալիք մասնագիտական վերապատրաստման դասընթացներին մասնակցության համար:

**Կատեգորիա 4A՝** Այս կատեգորիայով փաստացի կատարված աշխատանքների հաշվետվությունները ներկայացվում են Խորհրդատուի կողմից տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա ընթացքում: Փաստացի կատարված աշխատանքների սյունյակում ներկայացված 147 924 ԱՄՆ դոլար գումարը իրենց ներկայացնում է 2010թ.-ի միայն առաջին և երկրորդ եռամսյակների կատարված աշխատանքները, քանի որ երրորդ եռամսյակի կատարված աշխատանքները դեռ չեն երևում: Փաստացի վճարումների սյունյակում ներկայացված 415 025 ԱՄՆ դոլար գումարը իրենց ներկայացնում է 2010թ.-ի առաջին և երկրորդ եռամսյակների, ինչպես նաև 2009թ.-ի չորրորդ եռամսյակի (քանի որ 2009թ.-ի չորրորդ եռամսյակի վճարումը կատարվել է 2010թ.-ի առաջին եռամսյակում) կատարված աշխատանքների դիմաց փաստացի կատարված փաստացի վճարումը:

**Կատեգորիա 4B՝** 2 245 ԱՄՆ դոլարով ավել ծախսված գումարների տարբերությունը գոյանում է ըստ փաստացի վճարված ԾԿԳ-ի և ԾՀՄ-ի անձնակազմերի աշխատավարձերի, համայն ԾԿԽ-ի կողմից հաստատված հաստիքացուցակի:

**Կատեգորիա 5՝** տոկոսադրույքը (փաստացի վճարված է 136 592 ԱՄՆ դոլար) պահվում է ԱԶԲ-ի կոնսից. Վարկային համաձայնագրի Հոդված II-ի Մաս 2.02. և Մաս 2.03. կետերի դրույթներին համաձայն:

**Կատեգորիա 6՝** Այս կատեգորիայով նախկինում նախատեսված գումարի հիմնական մասը, ինչպես նաև այլ կատեգորիաներով ավելացած կամ ոչ նպատակահարմար գումարները վերաբաշխվել են շինարարական աշխատանքների վրա և համաձայն 2010թ.-ի մարտի 3-ին կատարված վարկային միջոցների վերաբաշխմանը այս կատեգորիայի գումարը դարձավ մոտ 336 000 ԱՄՆ դոլար: 2010թ.-ի երրորդ եռամսյակի համար այս կատեգորիայով նախատեսված 22 591 ԱՄՆ դոլար գումարի ծախսման անհրաժեշտություն դեռ չկա:

**Կատեգորիա 7՝** 6 430 ԱՄՆ դոլարով պակաս ծախսված գումարների տարբերությունը, բացատրվում է փաստացի պահանջներով:

Ծրագիրը բաղկացած է 2 բաղադրիչներից՝ Ա. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, և Բ. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ, որոնց մասին տեղեկությունները բերված են ներքևում:

## **II. Ա. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

### **Ա. Ներկայումս առկա ենթակառուցվածքների օպտիմալացում**

4. Ծրագրի համայնքային ենթակառուցվածքների վերակառուցման և բարելավման բաժնում ընդգրկված բոլոր աշխատանքները, ռազմավարությունները, ենթածրագրերի ընտրության չափանիշները՝ կենտրոնացված են ներկայիս ՋԶՀ ծառայություններ մատուցող օպերատորների ենթակառուցվածքների օպտիմալացմանը և

գործառնական արդյունավետության առավելագույն բարձրացմանը և ունեն միջամտությունների տրամաբանական հաջորդականություն: Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների և նախագծման ընթացքում ՀԶԿ-ի և ԶԻՆԶ-ՀԳՇՆ կոնսորցիումի (Խորհրդատու), ԾԿԳ մասնագետների, ԾՀՄ համակարգող-ինժեների, շրջանային ՋՀ մասնագետների և ՀԶԿ ՓԲԸ-ի տեխնիկական վարչության ներկայացուցիչների մասնակցությամբ **2010թ.-ի երեք եռամսյակների** ընթացքում վերոնշյալ հարցերի վերաբերյալ տեղի են ունեցել **շուրջ 15** հանդիպում: Դեռ **2010թ մարտի 31-ի** դրությամբ, ավարտվել է՝ Ծրագրի շրժանակներում ընդգրկված, քաղաքների և գյուղական համայնքների ընտրությունը, համաձայն որի Խորհրդատուի կողմից ուսումնասիրվել են, 18 ենթածրագրերի շրջանակներում, ընդհանուր առմամբ 261 համայնք, որոնցից նախագծային աշխատանքների արդյունքում ընտրվել է թվով 109 համայնք (16 քաղաք և 93 գյուղ):

2010թ.-ի մարտի 3-ին կատարված վարկային միջոցների վերաբաշխման հետևանքով, կապիտալ շինարարության համար հատկացվեց ևս մոտ 6 մլն. ԱՄՆ դոլար գումար, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ջրամարակարարման բարելավման աշխատանքներ՝ 7 քաղաքներում և 4 գյուղական համայնքներում: ԱԶԲ-ի հետ համաձայնեցնելուց հետո, նոր 7 ենթածրագրերի ցանկը ընդգրկվեց Ծրագրի գնումների պլանում, որն էլ համապատասխան կարգով հաստատվեց ԾԿԻ-ի կողմից: Հարկ է նշել նաև, որ նոր 7 ենթածրագրերի ընտրությունը համաձայնեցվել է ԱԶԲ-ի հետ: ԱԶԲ-ի հետ համաձայնեցվել է նաև, որ վերոհիշյալ ենթածրագրերի Նախագծային և Շինարարության Վերահսկման Աշխատանքները կիրականացվեն նույն Խորհրդատուի կողմից՝ No.WSSP-07/4-01 “Խորհրդատվական Ծառայությունների մատուցման, այսինքն՝ ինժեներական նախագծման, շինարարության վերահսկման և կառավարման բարելավման ծառայությունների մատուցման” պայմանագրի փոփոխության/լրացման շրջանակներում: ԾԿԻ-ի կողմից գնումների պլանը հաստատելուց հետո և համաձայն մինչ այդ ՀԶԿ ՓԲԸ-ում կայացած խորհրդակցության որոշումների, ՀԶԿ ՓԲԸ-ն Խորհրդատուին հանձնարարեց՝ ներկայացնել Նոր 7 ենթածրագրերի շրջանակներում Նախագծային Աշխատանքների և հետագայում Շինարարության Վերահսկման իրականացման համար իր ֆինանսական առաջարկը, ինչպես նաև սկսել նոր 7 ենթածրագրերի շրջանակներում նախնական ուսումնասիրությունները և նախագծային աշխատանքները մինչ պայմանագրի լրացումը կատարելը, ժամանակի խնայման տեսանկյունից ելնելով: Ստորև բերված, **Աղյուսակ II-1**-ում ներկայացված՝ ըստ պայմանագրերի նախնական նախատեսված գումարները, վերաբաշխվել են **2010թ.-ի երրորդ եռամսյակի** ընթացքում ելնելով նախագծային աշխատանքների իրականացման աշխատանքներից:

**Աղյուսակ II-1: Նոր ենթածրագրերի ցանկ**

Պայ. No.	Նկարագիրը	Նախնական նախատեսված գումարը ըստ պայմանագրերի (US\$ '000)
1-26	Կապան քաղաքի ՋՀ բարելավում	1 500,00
1-27	Իջևան քաղաքի ՋՀ բարելավում	1 000,00
1-28	Տաշիր քաղաքի ու Մեծավան և Սարչապետ գյուղերի ՋՀ բարելավում	1 100,00
1-29	Ստեփանավան քաղաքի ՋՀ բարելավում	500,00
1-30	Ալավերդի, Ախթալա քաղաքների ՋՀ բարելավում	400,00
1-31	Սևան ք.-ի մայր ջրատարի տեղափոխում, Գագարին քաղաքի ՋՀ բարելավում	500,00
1-32	Նոյակերտ, Եղեգնավան, Այգետապ, Մխչյան գյուղերի ՋՀ բարելավում	1 000,00
<b>Ընդամենը</b>		<b>6 000,00</b>

**Բ. Նախնական և Աշխատանքային նախագծերի պատրաստում ու շինարարության վերահսկողություն**

5. **2010թ.-ի արդեն իսկ մարտի 30-ի դրությամբ**, Խորհրդատուի կողմից կատարված և հանձնված են ՀԶԿ ՓԲԸ-ին բոլոր 18 ենթածրագրերով նախատեսված Նախնական և Աշխատանքային նախագծերը: Առ այսօր, 18 ենթածրագրերի շրջանակներում նախատեսված 33 շինարարական պայմանագրերից՝ աշխատանքները ավարտված են թվով 14 շինարարական պայմանագրերով (որից 1-ը՝ No.L2363-ICB-1-02 Արթիկ քաղաքի ՋՀ բարելավման պայմանագիրը ֆիզիկապես ավարտված է, սակայն ավարտական ակտերը դեռ կնքված չեն): Շինարարությունը և շինարարության վերահսկումը ընթանում է թվով 19 շինարարական պայմանագրերի շրջանակներում: Նոր, թվով 7 ենթացրագրերի շրջանակներում Խորհրդատուի կողմից արդեն իսկ կատարված են

Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունները և **2010թ** հոկտեմբերի 1-ի դրությամբ մոտ 80%-ով ավարտված են Նախնական Նախագծերը: Վերոհիշյալ նոր 7 ենթածրագրերով նախատեսված նախագծային և տեխնիկական վերահսկողության աշխատանքների իրականացման համար Խորհրդատու կազմակերպության հետ կատարվում են պայմանագրի փոփոխված պատվեր պատրաստման աշխատանքները: Խորհրդատու կազմակերպության կողմից վերոհիշյալ աշխատանքները իրականացնելու համար ներկայացված ֆինանսական առաջարկը քննարկվել և հաստատվել է ՀՋԿ ՓԲԸ-ի կողմից, ինչպես նաև ԱԶԲ-ի կողմից, որից հետո նախատեսվում է ներկայացնել ԾԿԽ-ի հաստատմանը **2010թ** հոկտեմբեր ամսվա սկզբում: Շինարարական աշխատանքների իրականացման վերաբերյալ մանրամասնությունները բերված են ստորև ներկայացված **Աղյուսակ III-1**-ում:

**2010թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝**

- բոլոր 33 ՋՀ բարելավման շինարարական՝ ընթացիկ և ավարտված պայմանագրերով ընդհանուր Ֆիզիկական Առաջընթացի Գործակիցը (ՖԱԳ) ՖԱԳ=78,23%, մինչ դեռ Ծրագրի իրականացման համար հատկացված ժամանակի միայն 48% տոկոսն է անցել,
- Ծրագրի շրջանակներում ընդգրկված համայնքներում, որտեղ արդեն իսկ ավարտված են շինարարական աշխատանքները՝ ջրամատակարարման տնտեսությունը միջինով ավելացել է գրեթե 7 ժամով՝ նախկինում միջին ջրամատակարարման տնտեսությունը այդ բնակավայրերում եղել է մոտ 9 ժամ/օր, իսկ 2010թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ դարձել է մոտ 16 ժամ/օր,
- Ծրագրի շրջանակներում կառուցվել/վերանորոգվել են՝ թվով 10 ՕԿՋ, թվով 6 ջրընդունիչներ/կապտաժներ, թվով 2 ջրի մաքրման կայաններ, թվով 8 խորքային հորեր, թվով 8 պոմպակայաններ, բոլոր բնակավայրերի համար կատարվում է ջրի քլորացում,
- Ծրագրով նախատեսված մոտ 700կմ նոր ջրագծերից՝ կառուցվել է մոտ 300 կմ նոր ջրագծեր,
- 33 շինարարական պայմանագրերի շրջանակներում ընդգրկված բոլոր թվով 16 քաղաքներում կատարվել են ներքին ցանցի գոտիավորման աշխատանքներ:

**Աղյուսակ III-1՝ Նախնական և Աշխատանքային նախագծերի, շինարարության վերահսկողության և համայնքների ընտրության կատարման կարգավիճակը**

Ենթածրագրեր	Ֆիզ. իրակ. %	Գործունեութ. փուլեր	Նշումներ
<b>Շինարարական Աշխատանքների առաջընթաց</b>			
<b>Ենթածրագիր 1 – (Արտաշատ)</b>			
փաթեթ 1 (Լանջազատ, Վերին Դվին, Դվին և Մրգավետ գ.գ. ՋՀ բարելավում)	97.4	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը 01.12.2010
փաթեթ 1.1 (Քաղցրաշեն, Նորաշեն, Գետազատ, Արևշատ, Արովյան և Կանաչուտ գ.գ. ՋՀ բարելավում)	100	ավարտված է	04.03.10
փաթեթ 1.2 (Արտաշատ քաղաքի ՋՀ բարելավում)	67.9	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 09.03.2011
<b>Ենթածրագիր 2 – (Վեդի)</b>			
փաթեթ 2.1 (Վեդի քաղաքի ՋՀ բարելավում)	100	ավարտված է	13.01.2010
փաթեթ 2.2 (Դաշտաքար, Նոր ՈՒղի, Վանաշեն, Տափերական, Ուրցաձոր, Վեդի (Գինեվետ) գ.գ. ՋՀ բարելավում)	100	ավարտված է	13.01.2010
<b>Ենթածրագիր 3 – (Մասիս)</b>			
փաթեթ 3.1 (Գետափնյա, Դաշտավան, Դարակերտ, Նորաբաց գ.գ. ՋՀ բարելավում)	100	ավարտված է	18.03.2010
փաթեթ 3.2 (Մասիս քաղաքի, Մարմարաշեն և Նոր Կյուրին գ.գ. ՋՀ բարելավում)	100	ավարտված է	02.02.2010
փաթեթ 3.3 (Ղուկասավան, Խաչփառ, Արբատ, Զորակ և Ազատաշեն գ.գ. ՋՀ բարելավում)	100	ավարտված է	24.02.10
փաթեթ 3.4 (Այնթափ գյուղի ՋՀ բարելավում)	100	ավարտված է	14.05.2010
փաթեթ 3.5 (ՕԿԶ-ի և ջրատարի (2xDN400, 2xL=900,0մ))	97.1	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 23.09.10
փաթեթ 3.6 (Ղուկասավան-Գեղանիստ ջրատարի հատվածի կառուցում (2xDN300, 2xԼ=250))	96.7	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 01.09.2010
<b>Ենթածրագիր 4 – (Սևան)</b>			
փաթեթ 4.1 (Սևան քաղաքի (Ցամաքաբերդ թաղամասի) և Ծովազարդ, Լճաշեն գ.գ. ՋՀ	98.3	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 01.11.2010

բարելավում)			
փաթեթ 4.2 (Հայրավանք, Բերդկունք, Լճափ գ.գ. ՋՀ բարելավում)	73.7	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 01.10.2010
<b>Ենթաճյուղ 5 – (Էջմիածին-1)</b>			
փաթեթ 5.1 (Էջմիածին քաղաքի և Ոսկեվազ գյուղի ՋՀ բարելավում)	100	ավարտված է	18.02.2010
փաթեթ 5.2 (Օշական և Ոսկեհատ գյուղերի ՋՀ բարելավում)	100	ավարտված է	նախատեսված ավարտը- 01.09.2010
<b>Ենթաճյուղ 6 – (Արույան)</b> (Արույան քաղաքի և Քաղսի, Քարաշամբ գ.գ. ՋՀ բարելավում)	70.7	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 15.03.2011
<b>Ենթաճյուղ 7 – (Ապարան)</b> (Օտղկահովիտ, Շենկանի, Ռիա Թագա, Վարդաբլուր, Սանգյառ, Գեղաձոր, Բերքառատ, Ամրե Թագա, Գեղաղիյր և Հնաբերդ գ.գ. ՋՀ բարելավում)	41.8	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 11.01.2011
<b>Ենթաճյուղ 8 – (Բերդ)</b> (Բերդ քաղաքի ՋՀ բարելավում)	61.2	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 21.08.10
<b>Ենթաճյուղ 9 – (Նոյեմբերյան)</b> (Այրում, Նոյեմբերյան քաղաքների և Դեղձավան, Հաղթանակ գ.գ. ՋՀ բարելավում)	72.4	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 01.03.11
<b>Ենթաճյուղ 10 – (Չարենցավան)</b> (Չարենցավան քաղաքի և Սոլակ, Արգել գ.գ. ՋՀ բարելավում)	6.5	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 12.01.11
<b>Ենթաճյուղ 11 – (Էջմիածին-2)</b> (Ուջան, Արագածոտն, Նոր Եդեսիա, Կոշ, Դպրևանք և Շամիրամ գ.գ. ՋՀ բարելավում)	57.2	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 01.03.11
<b>Ենթաճյուղ 12 – (Արմավիր գյուղեր)</b> (Արգինա, Շենիկ, Արտամետ և Արևադաշտ գ.գ. ՋՀ բարելավում)	45.3	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 15.03.11
<b>Ենթաճյուղ 13 – (Մեղրի)</b> (Ագարակ քաղաքի և Կարճևան գյուղի ՋՀ բարելավում)	31.7	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 11.01.2011
<b>Ենթաճյուղ 14 – (Գորիս)</b> (Գորիս քաղաքի ՋՀ բարելավում)	55.2	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 10.02.2011
<b>Ենթաճյուղ 15 – (Միսիան)</b> (Միսիան քաղաքի ՋՀ բարելավում)	57.7	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 11.01.2011
<b>Ենթաճյուղ 16 – (Արթիկ)</b> (Արթիկ քաղաքի և Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Արևշատ, Սպանդարյան, Նորաշեն, Գեղանիստ, Անուշավան, Վարդաքար, Նոր կյանք, Փանիկ, Մեղրաշեն, Գետափ և Հովտաշեն գ.գ. ՋՀ բարելավում)	0	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 18.06.2011
<b>Ենթաճյուղ 17 – (Աշոցք)</b> (Աշոցք, Թորոսգյուղ, Վարդաբլուր, Մուսայելյան, Հարթաշեն, Զույգաղբյուր, Կարմրավան և Բավրա գ.գ. ՋՀ բարելավում)	85.8	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 19.03.11
<b>Ենթաճյուղ 18 – (Եղեգնաձոր)</b> (Եղեգնաձոր քաղաքի և Գետափ, Գոմք, Մալիշկա, Շատին և Նոր Ազնաբերդ գ.գ. ՋՀ բարելավում)	48.1	շին. վերահսկ.	նախատեսված ավարտը- 12.01.11
<b>Գորիս քաղաք</b>	100	ավարտված է	26.02.2010
<b>Թալին քաղաք</b>	100	ավարտված է	15.12.2009
<b>Էջմիածին քաղաք</b>	100	ավարտված է	26.02.2010
<b>Սուրենավան, Արմաշ, Երասխ</b>	100	ավարտված է	10.03.2010
<b>Արթիկ քաղաք</b>	100	Ֆիզ. ավարտված է, ավրտ. ակտը պատր.	նախատեսված ավարտը- 01.09.10
<b>Ընդհանուր Ֆիզիկական Իրականացման գործակից</b>	77.7		
<b>Նախագծային աշխատանքների առաջընթաց</b>		<b>Նախատեսված ավարտը</b>	
<b>Ենթաճյուղ 19 – (Կապան)</b> Կապան քաղաքի ՋՀ բարելավում	100 3	ՆՆ ԱՆ	ՆՆ – 30.10.10, ԱՆ – 15.12.10
<b>Ենթաճյուղ 20 – (Իջևան)</b> Իջևան քաղաքի ՋՀ բարելավում	95 0	ՆՆ ԱՆ	ՆՆ – 30.10.10, ԱՆ – 15.12.10
<b>Ենթաճյուղ 21 – (Տաշիր)</b> Տաշիր քաղաքի ու Մեծավան և Սարչապետ գյուղերի ՋՀ բարելավում	100 5	ՆՆ ԱՆ	ՆՆ – 30.10.10, ԱՆ – 15.12.10
<b>Ենթաճյուղ 22 – (Ստեփանավան)</b> Ստեփանավան քաղաքի ՋՀ բարելավում	80 0	ՆՆ ԱՆ	ՆՆ – 05.11.10, ԱՆ – 25.12.10
<b>Ենթաճյուղ 23 – (Ալավերդի)</b> Ալավերդի, Ախթալա քաղաքների ՋՀ բարելավում	30 0	ՆՆ ԱՆ	ՆՆ – 10.11.10, ԱՆ – 15.01.11
<b>Ենթաճյուղ 24 – (Սևան - Գագարին)</b> Սևան քաղաքի մայր ջրատարի տեղափոխում, Գագարին քաղաքի ՋՀ բարելավում	45 0	ՆՆ ԱՆ	ՆՆ – 05.11.10, ԱՆ – 25.12.10
<b>Ենթաճյուղ 25 – (Արարատ)</b> Նոյակերտ, Եղեգնավան, Այգետապ, Մխչյան գյուղերի ՋՀ բարելավում	95 0	ՆՆ ԱՆ	ՆՆ – 30.10.10, ԱՆ – 15.12.10

### III. Բ. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՁՈՐԱՑՈՒՄ

#### Ա. Ներածություն

6. Ծրագրի այս Բաղադրիչով արտացոլված են համայնքների և ՀԶԿ ՓԲԸ-ի սեփական կարողությունների հզորացմանը և բարելավմանը ուղղված՝ Խորհրդատուի կողմից կազմակերպված սեմինարներն և դասընթացները: Համաձայն վերանայված աշխատանքային պլանի Խորհրդատուն վերսկսեց ծրագրային աշխատանքները 2009թ. հունիսի 1-ից՝ առավել արդյունավետ և ռացիոնալ մոտեցումներով: 2010թ.-ի հոկտեմբերի 30-ի դրությամբ Խորհրդատուի կողմից այս բաղադրիչով աշխատանքները ավարտված են, բացառությամբ շինարարական աշխատանքների ընթացքում անցկացվող հանրային իրազեկման աշխատանքների: Ստորև ներկայացրացեն Բաղադրիչ Բ-ով նախատեսված աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկությունները:

#### Բ. Տեխնիկական և ֆինանսական անձնակազմի վերապատրաստում

7. Շինարարության վերահսկողության մասնագետների ուսուցումը ավարտվել է, և ուսուցման ավարտական հաշվետվությունը ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ 20.05.2010թ.: Խորհրդատուն իր գրասենյակում իրականացրել է ՀԶԿ շինարարության վերահսկողության մասնագետների ուսուցման կարիքների գնահատում՝ հարցաթերթիկների օգնությամբ և հարցաթերթիկների պատասխանների և անձնական զրույցների միջոցով կատարել է գիտելիքների գնահատում, որոնց արդյունքում որոշվել են այն հիմնական հարցերը, որոնց վրա պետք է կատարել շեշտադրում՝ ուսումնական պարապունքների ընթացքում: Ուսուցման դասընթացները (ընդհանուր առմամբ 74 մարդ/ժամ) անց են կացվել Խորհրդատուի գրասենյակում 2009թ. երրորդ եռամսյակում:

Ակտիվների (գույքի) կառավարման խմբի ուսուցումը ավարտվել է և կազմվել է ուսուցման ավարտական հաշվետվություն, որը ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ 21.03.10թ.: Վերապատրաստման դասընթացներն (ընդհանուր առմամբ 70 մարդ/ժամ) անց են կացվել ՀԶԿ ՓԲԸ-ի Էջմիածնի ուսուցման կենտրոնում, որին ներգրավված են եղել ՀԶԿ-ի 5 գույքի կառավարման մասնագետներ:

Հաշվապահական անձնակազմի ուսուցումը ավարտվել է և կազմվել է ուսուցման ավարտական հաշվետվություն, որը ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ 20.05.2010թ.: Վերապատրաստման դասընթացներն (ընդհանուր առմամբ 240 մարդ/ժամ) անց են կացվել ՀԶԿ ՓԲԸ-ի Էջմիածնի ուսուցման կենտրոնում և գլխամասում, որին ներգրավված են եղել ՀԶԿ ՓԲԸ-ի 15 հաշվապահներ և ֆինանսական դեպարտամենտի աշխատակիցներ:

#### Գ. Ֆինանսական կառավարում

8. ՀԶԿ ՓԲԸ-ի Կառավարման տեղեկատվական համակարգի հայեցակարգի հիմնադրույթների և դրա իրականացման քայլերի մշակումն ավարտից հետո կազմվել է հատուկ հաշվետվություն ու ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ-ի քննարկմանը: Հետագայում համաձայն աշխատանքային պլանի այն նորացվել է, իր մեջ ներառելով նոր գլուխ՝ Կառավարման Ինֆորմացիոն Համակարգը (ԿԻՀ) և Կատարողական Ցուցանիշները: Նորացված հաշվետվությունը ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ-ի քննարկմանը 20.05.10.թ.:

- ՀԶԿ ՓԲԸ-ի Ակտիվների կառավարման համակարգի հայեցակարգի հիմնադրույթների մշակումն ավարտվել է և նախնական հաշվետվությունը ներկայացվել է 18.11.09թ.: Գոյություն ունեցող հաշվապահական հաշվառման համակարգի գնահատման (ներառյալ սահմանված ընթացակարգերը և հաշվապահական ծրագրային ապահովման արդյունավետությունն ու հուսալիությունը) վերաբերյալ կազմվել է հատուկ հաշվետվություն ու ներկայացվել է ՀԶԿ-ի քննարկմանը:
- Հաշվապահական համակարգի զարգացման ռազմավարության մշակումն և հաշվառման կատարողականության բարելավման համար օպտիմալ կազմակերպչական կառուցվածքի որոշման վերաբերյալ կատարվել է հետևյալը՝ քննարկելով առկա մասնաճյուղային մակարդակի կառուցվածքից կենտրոնացված կառուցվածքի անցնելու նպատակահարմարությունը՝ կազմվել է հատուկ հաշվետվություն ու ներկայացվել է ՀԶԿ-ի քննարկմանը 18.11.09թ., իսկ վերջնական վերանայված հաշվետվությունը ներկայացվել է

18.01.10 թ.: Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերանայման մասով (եկամտի և ծախսերի կենտրոնների մասով գլխի ավելացում և հաշվապահական հաշվառման ստանդարտների փոփոխություններով պայմանավորված վերանայում) կազմվել է հատուկ հաշվետվություն ու ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ-ի քննարկմանը 18.11.09թ, իսկ վերջնական վերանայված հաշվետվությունը ներկայացվել է 18.01.10 թ.:

- Հաշվապահական ձեռնարկի վերանայումանը ուղղված հատուկ հաշվետվությունը կազմվել ու ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ-ի քննարկմանը 18.11.09թ, իսկ վերջնական վերանայված հաշվետվությունը ներկայացվել է 18.01.10 թ.:
- Նոր հաշվապահական համակարգչային ծրագրին ներկայացվող պահանջների որոշումից հետո կազմվել է հատուկ հաշվետվություն ու ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ-ի քննարկմանը 18.11.09թ, իսկ վերջնական վերանայված հաշվետվությունը ներկայացվել է 18.01.10 թ.:
- Խորհրդատուն ընկերության առևտրային կառավարման համակարգի բարելավման մասով կատարվել է գոյություն ունեցող բիլինգի ծրագրի գնահատում և արդյունավետ հաշվետվությունների համակարգի առաջարկում և վերանայվել է ՀԶԿ ՓԲԸ-ի գործող առևտրային քաղաքականությունը: Արդյունքում կազմվել է հատուկ հաշվետվություն, որը ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ-ին 31.05.2010թ.:
- Տեղեկությունների համակարգված հոսքի ստացման մեխանիզմների բարելավման մասով կազմվել է պրեզենտացիոն նյութ, որը ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ-ին 31.05.2010 թ.: Տեղեկությունների համակարգված հոսքի ստացման մեխանիզմների բարելավման, Առևտրային և Իրավաբանական բաժինների միջև անալիտիկ վերլուծական հաշվետվությունների ձևերի մշակման մասով կազմվել է հատուկ հաշվետվություն, որը ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ-ին 31.05.2010թ.: Կազմակերպվել են բազմաթիվ սեմինարներ:

#### **Դ. Հանրային իրազեկման ծրագիր**

9. **2010թ դեռ մարտի 31-ի** դրությամբ ավարտվել են հանրային իրազեկման աշխատանքները բոլոր 18 ենթածրագրերի Նախնական և Աշխատանքային Նախագծերի փուլերում, իրականացվում են հանրային իրազեկման աշխատանքները շինարարական աշխատանքների իրականացման փուլում գտնվող հետևյալ համայնքներում՝ X ենծրագրի Չարենցավան, Մուլակ Արգել գյուղերում:

Բոլոր հանրային քննարկումների ժամանակ ապահովված է եղել կանանց ներկայությունը և ակտիվ մասնակցությունը: Ամբողջ ծրագրի արդյունավետ և կայուն իրականացման համար ապահովվել է անմիջական կապ համայնքային ենթակառուցվածքների վերականգնման և բարելավման բաղադրիչում ներառված բոլոր աշխատանքային խմբերի հետ, այդ աշխատանքների կատարման մասին հասարակության իրազեկման և նրանցում մասնակցության ապահովման միջոցով: Կազմվել է ամփոփիչ ընթացիկ հաշվետվություն, որը ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ-ին 11.03.10թ.:

#### **Ե. Գույքի կառավարում**

10. Ավարտվել են նաև աշխատանքները կապված ՀԶԿ ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի համար տվյալների մոդելների հայեցակարգի մշակման հետ, որը ներկայացվել է ՀԶԿ ՓԲԸ-ին 31.05.2010թ.:

#### **Զ. Ջրի որակ**

11. Խորհրդատու կազմակերպությունը, “Ջրի որակի մոնիտորինգի պլանի մշակում ջրաղբյուրների և ջրամատակարարման համակարգի համար” առաջադրանքի շրջանակներում, ուսումնասիրել է ՀԶԿ ՓԲԸ-ի խմելու ջրի մոնիտորինգի համակարգը: Ներկայումս ՀԶԿ ՓԲԸ-ի գոյություն ունեցող ջրի որակի մոնիտորինգի պլանի հետազոտության արդյունքում հիմնավորվել է վերջինիս համապատասխանությունը ՀՀ գործող նորմերի պահանջներին (No. 2-III-A 2-1 սանիտարական նորմեր և կանոններ, Առողջապահության նախարարության կողմից գրանցում 25.12.2002թ., հաստատվել և գրանցվել են Արդարադատության նախարարությունում No. 100022419 առ 28.12.2002), բացառությամբ որոշ կետերի, որոնք լրամշակվել են:

**IV. ԳՆՈՒՄՆԵՐ**

**Ա. Գնումների կարգավիճակ**

12. **2010թ.-ի հոկտեմբերի 1-ի** դրությամբ Ծրագրի 18 Ենթաձրագրերի շրջանակներում արդեն իսկ կնքվել են բոլոր նախատեսված շինարարական աշխատանքների պայմանագրերը (թվով 33): Կնքվել է թվով 2՝ L2363-ICB-2-06/1 և L2363-ICB-2-06/2 Սարքավորումների և նյութերի մատակարարման պայմանագրեր:

Կից ԾԿԽ-ն հաստատմանը ներկայացվում է նաև 2010թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ վերանայված՝ ԱԶԲ-ի “Զրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագրի” Գնումների Պլանը: Այն նախատեսված է ամբողջ ծրագրի համար և կազմված է վարկային համաձայնագրով սահմանված կատեգորիաներին համապատասխան, համապատասխանում է 2010թ.-ի մարտի 3-ին կատարված վարկային միջոցների վերաբաշխմանը և համաձայնեցված է ԱԶԲ-ի հետ:

**V. ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ**

**Ա. Մասհանումների առաջընթացը**

13. **2010թ.-ի հոկտեմբերի 1-ի** դրությամբ Ծրագրի շրջանակներում կատարված մասհանումների առաջընթացը՝ ըստ կատեգորիաների, տրված է ստորոք ներկայացված աղյուսակում:

**Աղյուսակ V-1՝ Ծրագրում կատարված հիմնական ներդրումներ**

Գատ No.	Վարկային կատեգորիա	Տվյալ եռամսյակում վճարված գումարներ	Տարվա ընթացքում վճարված գումարներ	Ծրագրի ընթացքում վճարված գումարներ
1	Աշխատանքներ	\$ 803 246.01	\$ 2 669 225.67	\$13 710 914.63
2	Սարքավորումներ և նյութեր	\$ 3 854 495.41	\$ 7 354 458.33	\$10 195 410.83
3	Դասընթացներ	0	0	0
4	Խորհրդատվական ծառայություններ	\$ 131 458.05	\$ 542 936.39	\$ 2 285 004.75
4A	Կառավարում, նախագծ. և վերահսկ.	\$ 82 965.88	\$ 415 024.75	\$ 1 843 534.26
4B	Ծրագրի կառավարում	\$ 48 492.17	\$ 127 911.64	\$ 441 470.49
5	Տոկոսադրույք	\$ 83 123.73	\$ 136 591.76	\$ 164 098.95
6	Չբաշխված	0	0	0
7	Գործառնական ծախսեր	\$ 22 140.67	\$ 53 598.14	\$ 168 846.68

**Բ. Մասհանման հայտեր և վճարումներ**

14. Մասհանման հայտերը պատրաստվում են համաձայն ԱԶԲ Վարկերի վճարման Ձեռնարկի (2007, փոփոխվում է ժամանակ առ ժամանակ): **2010թ.-ի երրորդ եռամսյակի** ընթացքում ԱԶԲ-ի վճարմանն են ներկայացվել ընդամենը թվով 4 մասհանման հայտերը՝

ՄՀ No.29 – 718 145.45 ԱՄՆ դոլար, ՄՀ No.30 – 930 352.12 ԱՄՆ դոլար, ՄՀ No.31 – 652 261.21 ԱՄՆ դոլար, ՄՀ No.32 – 871 800.02 ԱՄՆ դոլար:

**Գ. Համաֆինանսավորում**

15. Համաֆինանսավորման միջոցների հետ կապված դժվարություններ **2010թ.-ի երեք եռամսյակների** ընթացքում չեն եղել:

**Աղյուսակ V-2՝ Համաֆինանսավորում**

Անվանում	Գումար
Գործադիր գործակալության կողմից բյուջեի միջոցների պահանջվող գումարը	\$ 4 462 800. 00
Կառավարության կողմից հաստատված գումարը տարեկան բյուջեում	\$ 4 462 800. 00
Օգտագործված գումարը 2010թ-ի համար	\$ 2,764,482.45
Բաշխված գումարների վճարման հետ կապված դժվարություններ՝ բյուջետային կամ այլ ընթացակարգերի պատճառով	Չկա

## VI. ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

### Ա. Հաշվետվություններ

16. ԾԿԳ-ն ամեն եռամսյակ պատրաստում է առաջընթացի եռամսյակային հաշվետվություն ԾԿԽ-ի համար (համաձայն ԾԿԽ-ի հավանած ֆորմատի) ինչպես նաև Ծրագրի առաջընթացի եռամսյակային հաշվետվություն ԱԶԲ-ի համար (համաձայն ԱԶԲ-ի կողմից ներկայացված պահանջների և պայմանավորված ֆորմատի), որտեղ ներառվում են Ծրագրի բյուջեով նախատեսված միջոցների ծախսման վերաբերյալ տվյալները (ըստ կատեգորիաների), ծագած խնդիրները, ձեռնարկված քայլերը կամ առաջարկված լուծման եղանակները և հաջորդող եռամսյակի ակնկալիքները:

### Բ. Ծրագրի մոնիտորինգ

17. ԱԶԲ-ի վարկի վերահսկման առաքելությունների (Առաքելություն) այցը Հայաստան՝ տեղի է ունեցել 2010թ.-ի մայիսի 3-ից 8-ը: Առաքելությունների հիմնական նպատակն էր ուսումնասիրել ծրագրերի բաղադրիչների իրականացման ընթացքը, դրանց համապատասխանությունը սոցիալական և բնապահպանական անվտանգության կանոններին վարկային դրույթներին, ինչպես նաև բացահայտված հրատապ խոչընդոտների և խնդիրների լուծման մասին համաձայնությունների գալ: Ամբողջ տեղեկատվություններն, արդյունքներն ու առաջարկությունները ներկայացված են Առաքելության ներկայացուցչի կողմից պատրաստած Աջակցող Հուշագրերում (ԱՀ) և Ծրագրի վարչարարության հուշագրերում (ԾՎՀ):

Առաքելության ներկայացուցիչը գոհունակությամբ նշեց Ծրագրի արագընթաց իրականացումը, շինարարության որակը, ՀԶԿ ՓԲԸ-ի կողմից և Խորհրդատուի կողմից իրականացվող տեխնիկական վերահսկումը և ընթացակարգերը և կրկին անգամ առաջարկեց տրամադրել պարգևատրում ԾԿԳ-ի և ԾՀՄ-ի աշխատակիցների 2008 և 2009 թթ. Բեղմնավոր աշխատանքի համար: Նախատեսվում է 2010թ. հոկտեմբեր ամսին վերոհիշյալ պարգևատրման առաջարկը ներկայացնել ԾԿԽ-ի հաստատմանը:

## VII. ՀԱԶՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԾՐԱԳՐԵՐ

### ԲԱՂԱԴՐԻՉ Ա: ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

19. Հաջորդ եռամսյակում՝ 2010թ.-ի հոկտեմբերի 1-ից մինչև եռամսյակի վերջը՝ դեկտեմբերի 31-ը կշարունակվեն ընթացքի մեջ գտնվող թվով 19 պայմանագրերով շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության աշխատանքներ, ինչպես նաև ակնկալվում է շինարարությունը ավարտել նշված 19-ից ևս թվով 11 շինարարական պայմանագրերով: Ակնկալվում է, որ Խորհրդատու կազմակերպությունը կավարտի թվով 7 նոր ենթածրագրերի համար Նախնական և Աշխատանքային նախագծերի պատրաստումը: Կվերանայվի Խորհրդատու կազմակերպության հետ կնքած պայմանագիրը և կկատրաստվի հավելյալ աշխատանքների համար պայմանագրի գումարի ավելացում:

### ԲԱՂԱԴՐԻՉ Բ: ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

20. 2010թ.-ի երրորդ եռամսյակում Խորհրդատուի կողմից ՀԶԿ ՓԲԸ ներկայացվել են Բաղադրիչ Բ-ի մասով բոլոր ավարտական հաշվետվությունները՝ համաձայն Խորհրդատուի պայմանագրի տեխնիկական առաջադրանքի դրույթների: Հասարակության իրազեկման և մասնակցության ապահովման աշխատանքները կատարվելու են պլանավորված կարգով, շինարարական աշխատանքների իրականացման փուլում գտնվող համայնքներում և ըստ նոր սկսվող շինարարական փաթեթների: